

614

Դ-46

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ
ԲԱՅԻՆԱԿԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԴԻՆԸ 10 ԿՈՊ.

614

Դ-46

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՐԵԿԱՆ

1940

БИБЛИОТЕКА
Академии Наук
УРСР

02 APR 2013

ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՎԱՐԱԿԻՁ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՍ

ԳԻՋԵՆՏԵՐԻԱՅԻ ԲԱՑԻԼԱԿԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիզենտերիան տարած վորուչ մարդիկ, դրանից հետո բավականին յերկար ժամանակ կղանքի հետ միկրոբներ— դիզենտերիայի հարուցիչներ են արտադրում: Այդպիսի մարդիկ կոչվում են բացիլակիրներ*):

Դիզենտերիայի բացիլակիրները հաճախ հիվանդանում են խրոնիկական կոլիտով, ալսինքն, հաստաղինների յերկարատե բորբոքումով: Այդ պատճառով աղիքների ամենմի խրոնիկական հիվանդության դեպքում դիզենտերիայից հետո պետք է յենթադրել, վոր հիվանդը չարուանակում է դիզենտերիայի միկրոբներ արտադրել: Ընկնելով արտաքին միջավայրի մեջ (հողի վրա, ջրում և այլն) միկրոբները, համապատասխան պայմանների դեպքում, կարող են լայն տարածում ստանալ, հիվանդացնել շրջապատողներին: Դիզենտերիայի միկրոբների տարածման դործում մեծ դեր են խաղում ճանճերը: Այդ պատճառով ճանճերի ամենից ավելի շատ տարածման շրջանում՝ աճում և նաև դիզենտերիայով հիվանդանալու թիվը: Դիզենտերիայով վարակումը տեղի յե ունենում դիզենտերիայի միկրոբներով կեղտոտված ուտելիք և խմելիք դործածելու ժամանակ: Բացի ճանճերից և վարակված ջրից, մթերքները կարող են կեղտոտվել անմիջականորեն բացիլակիրների և հիվանդների ձեռներով: Դիզենտերիայի միկրոբը մարդուց դուրս յերկար ժամանակ ապրել չի կարող, մասնավորապես ձմեռ ժամանակ, իսկ դիզենտերիայով հիվանդանալն ամեն տարի յե նկատվում: Նշանակում է միկրոբներ ինչվոր քանակություն պահվում է մարդկային որդանիլ-

*) Տվյալ դեպքում բացիլը նույնն է, ինչ վոր միկրոբը:

6959-53

20 JUL 2010

մում և տաք որերի վրա հասնելու հետ հետագա հիվանդությունների աղբյուր հանդիսանում:

Դիտողությունը պարզել է, վոր միկրոբները պահպանվում են միայն բացիլակիրների որդանիլմում: Այդ պատճառով բոլոր հայտաբերված կրողները պետք է հիշեն, թե ինչպիսի վտանգ են ներկայացնում իրենք շրջապատողների համար և պետք է հետևեն այնպիսի ռեժիմի, վորն այդ վտանգն ամենաչնչին չափերի հասցնի:

Բացիլակիրներն աշխատանքի չպետք է թողնվեն անդի հիմնարկներում և ձեռնարկություններում— ճաշարաններ, մթերքի պահեստներ ու խանութներ, կաթնատնտեսական ֆերմաներ, ջրմուղ և մանկական հիմնարկներ—մինչև բացիլակրության դադարելը:

Յեթե կրողն իր պրոֆեսիայով անդի զծով է աշխատում—խոհարար, մատուցող, բուֆետպան, կրթող և այլն—նրան պետք է հանել աշխատանքից մինչև բացիլակրության դադարելը, իսկ յեթե այդ բացիլակրությունը յերկարատե է, ավելի լավ է նա փոխի իր պրոֆեսիան:

Յեթե վորեւ պատճառով բացիլակիրն կերակուր պատրաստելուց բոլորովին հեռացնելը հնարավոր չէ, որինակ, յեթե կրողը անային տնտեսուհի յե, հարկավոր է, վորպեսզի այդպիսի կրողը կրկնապատիկ մաքրություն պահպանի—վիճառ ձեռներն ամեն դամ ձեռնարկելով կերակուր պատրաստելուն, կով կթելուն և այլն:

Ցանկալի յե այդպիսի աշխատանքների համար տնային կենցաղում առանձին հատուկ հաղուտ ունենալ:

Բացիլակիրները կենցաղում պահպանեն հետևյալ հիգիենիկ կան

ՀՀ Ազգային գրադարան



NL0273234

գնալ միայն գուգարանում, գուգարանում ոգտվել
թղթից և չկեղտոտել պատերը: Ամեն անգամ գու-
գարան գնալուց հետո ուշադրությամբ լվանալ ձեռ-
ները: Ամեն անգամ ուտելուց առաջ անպայման լը-
վանալ ձեռները: Ուտելու համար բացելակիրներին
պետք է անպայման առանձին ամանեղեն հատկացվի:

Զուգարանները սիստեմատիկորեն պետք է միա-
սազրկվեն, աղբահորը քլորակիր 10 օ/օ-անոց լու-
ծույթով վողողելու միջոցով: Լուծույթը հետեյալ
ձևով են պատրաստում. 1 կիլոգրամ քլորակիրը խառ-
նում են սկզբում փոքր քանակությամբ ջրի հետ մին-
չև հում սերի թանձրության և բաց անում մինչև 10
լիտր ջրով (միջին մեծության դուլլ): Զուգարաննե-
րում պետք է լվանալ հատակը, ինչպես նաև պա-
տերն ու զոները, մարդկային հասակի բարձրու-
թյամբ: Այդ նպատակի համար ամենից լավ է ոգտը-
վել քլորակիր 0,5 օ/օ-անոց ջրային լուծույթով (1
թեյի գդալ 1 լիտր ջրին):

Հարկավոր է հիշել, Վոր մարդ կարող է բացելա-
կիր լինել շատ յերկար ժամանակ, յերբեմն շատ տա-
րիներ, այդ պատճառով բացելակիրը ժամանակ առ
ժամանակ պետք է հետադուրսության յենթարկի իր կը-
ղանքը լաբորատորիայում և գտնվի բժշկի մշտական
հսկողության տակ:

О бактерионосителях дисентерии

БИБЛИОТЕКА
Академии Наук
УРСР

Թարգմ. Ավ. Շաթիրյան. Պատ. խմբ.՝ բժ. Ս. Մկրտչյան,
Տեխ. խմբ. Ի. Վարդանյան, Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան
Գլավիտի լիպոր Բ.—1151 Պատվեր 354. Տիրաժ 4000

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65